

լուանում շորերը, այդ գիշեր էլ մօտը մնում և առաւօտեան վերադառնում:

Երբ առաջին անգամ հարսը գնում է աղբիւր ջուր բերելու, իւր հետ ցորեն է տանում և լցնում աղբիւրի ակը: \*)

Ե. Լ.

## ՏՂԱՐԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Մինչ դեռ կնոջ արգասաւորութիւնը մեծ ուրախութիւն է պատճառում ինչպէս ամուսնուն, այնպէս և՛ ամբողջ գերդաստանին, նրա ամուլութիւնը դժգոհութիւնների և երբեմբն ապօրինի կնապահութեան տեղիք է տալիս: Սակայն դեռ այդ աստիճանին չհասած, ամուլ կինը դիմում է փախչիներին՝ միջնորդութեան և նրանց զգիր անել տալով՝ յոյս է տածում երեխայ ունենալու: Երբ մարդկային միջոցները անզօր են գտնուում և յաճախ տեսնուող երազները արամադրում են նրան սրբերի օգնութիւնը հայցելու, վերցնում է մի սպիտակ խոյ և ոտաբորիկ դիմում սրբի դուռը: Այս տեսակի սրբերից Վարանդալում նշանաւոր են Սարիբէկը, Ամարասի Ս. Գրիգորիսը, Սարուշէնի Աւետարանը, Սզնէքի Ս. Յովհաննէսը և այլն:

Մօտենալով սրբի դռանը, ամուլ կինը երեք անգամ չօքէչօք պատում է նրա շուրջը և ապա համբուրելով սրբութիւնը, չոքած և ձեռքերը գետնին լինած՝ անշարժ մնում է: Այս ժամանակ մի անմեղ մանուկ վերցնում է մի կտոր

\*) Այս լոգուածը պատրաստելիս, բացի այն որ ես անձամբ ներկայ եմ գտնուել մի քանի հարսանիքների, այլ և իմ տուած ծրագրով ինձ համար նիւթեր են հաւաքել տարբի գիւղերից Պ. Պ. Տէր-Սարգսեան, Բալալեան, Իշխանեան, Մելիք Ալլահվերդեան, Ազրևսեան, Տէրաէրեան և ուրիշներ, որոնց շնորհակալութիւնս եմ լսանում:

քար և դնում նրա վզին: Քահանան անմիջապէս ձգում է նրա վրայ իւր շուրջառը, և աղօթքներ կարդում: Մի կին էլ նրա մօտ հսկում է, որ ոչ ոք չհիւսի նրան և խանգարէ նրա խնդրուածքը:

Կինը ջերմեռանդութեամբ աղօթելուց յետոյ խոստանում է եօթը գիւղ ման գալ, «մատաղ հաւաքել», ոչխար առնել և բերել «նրա ոտքի տակը», եթէ իւր խնդիրը կատարի ու մի որդի տայ:

Եթէ այս միջոցը ևս չի օգնում, գնում երեք անգամ անցնում է տղայ տուող Ծակ քարերից՝ նոյն խնդիրը կրկնելով:

Միւսնոյն ժամանակ լսելով կախարդ կանանց, ամուլ կինը փոխում է իր ննջարանը, կարծելով թէ այդտեղ քաջքեր կան, որ թոյլ չեն տալիս որդի ունենալու: Մուտ ժամանակ տաք ջուր դուրս չի ածում, մուտ տեղը ջուր չի խմում, որովհետեւ չար սատանան այդպիսի տեղերից պակաս չի լինում: Երբեմն էլ չբերքութիւնը «կոխից» յառաջացած են համարում: Այս պատահում է, երբ նոր պսակուած ժամանակ հարսի մօտ չար և անմաքուր մարդիկ են գալիս: Կոխուած կինը եօթը տարի ամուլ է մնում, և եթէ սրանից յետոյ էլ որդի չի ունենում, այն ժամանակ նրան տանում, սպանուած մարդու գերեզմանի վրայ ջուր են խմացնում, ննջեցեալի սակով անցկացնում, կամ նոր պսակուածների տան կտրով ման ածում և այլն:

Մինչդեռ քաղաքում յղի կնոջ դրութիւնը փոքր ինչ լաւ է, գիւղում սաստիկ աննախանձելի է: Գիւղացի կինը յղութեան նոյն իսկ վերջին օրերում չի ազատւում տնային ծանր աշխատանքներից. պատահել են դէպքեր, երբ կինը տղայ է ծնել ծանր կուժը ուսին, աղբիւրի ճանապարհին, և կամ այգում, միայնակ աշխատելիս: Տատմօր օգնութիւնը բոլորին չի հասնում:

Երկուսքը սկսուած միջոցին հրաւիրում են տատմօրը և կնոջը առանձնացնում մի սենեակում: Եթէ երկուսքը երկար է տևում, սկեսուրը փեշը ջուր ածած՝ առաջարկում է

ծննդականին խմելու, որով և՛ ներուժն են նրա՝ սկեսուրի և կամ տան միւս անդամների դէմ գործած լանցանքները:

Մօտիկ ազգական կանայք գալիս են օգնութեան և խրփելով ծննդականի մէջքին բղաւում. «Լոշուն էկաւ. թալանեցի՛ն, տարան»: Մինն էլ հերթիկից մի ձու է վայր ձգում, սսելով. «Բերում ըս բեր, բերում չես՝ ես բերում ըմ»:

Երբեմն պատահում է, որ ծննդկանը ուշաթափուժ է: Իսկոյն նրա մօտի կանայք, հաւատարով, որ արդէն քաջքերը տիրապետել են ծննդկանին, սարսափած փախչում են. մնում են միայն արհասիրտները, որոնք քանդում են նրա գլխի փաթեթները և դնում գլխին կնքահօր գլխարկը, որպէս զի քաջքերը կարծեն, թէ նա տղամարդ է: Անմիջապէս գալիս է կնքահայրը և սկսում ապտակել, խփել ծննդկանին, ամբողջ մարմինը հարել: Միւսներն էլ հրացաններ են արձակում, վառօդ վառում, քաջքերին հալածելու և ծննդկանին ուշքի բերելու նպատակով: Եթէ երեխան արդէն աշխարհ է եկած լինում, նրան վերցնում տանում դնում են երգիկը, որով նուիրում են նրան քաջքերին, խնդրելով խնայել մօրը: Այս բոլոր ժամանակ սաստիկ զգուշանում են ծննդկանի անուճը տալու, որպէս զի քաջքերը նրան էլ իրենց աղաքը չգասեն: Բացի սրանից, ծննդկանի երեսին լեղակ են քսում և բարձի տակն էլ շամփուրներ, սանդերք, պողպատի կտորներ և համայիւններ դնում: Երբ ծննդկանը ուշքի է գալիս, նրան տալիս են մի կծիկ կծկելու և կամ մի ուրիշ գործ, որպէս զի նրանով զբաղուի և քաջքերին ուշք չգարձնի:

Երբ երեխան աշխարհ է գալիս, տատմայրը երեսը երեք անգամ խաչակնքելով և «հայր մեր» շննջալով կտրում է պորտը և բամբակի թելով կապում: Եթէ երեխան տղայ է լինում, պորտից ընկած կտորը տանում ձգում են մի ընդարձակ տեղ, որպէսզի տղան մեծանալիս հասարակութեան մէջ մտնող ելնող լինի, չամաչի, ի՞նչ եթէ աղջիկ է, ձգում են մի լետ ընկած անկիւն, որպէսզի համեստ և ամօթխած տանտիկին դառնալ: Դանակն էլ պահում են, որ մկրտու-

Թեան ջրով սրբեն: Սրանից յետոյ տատմայրը ծննդկանին կանգնեցնում է տաշտի մէջ, Ս. Մարիամ Աստուածածնայ աղօթքն ասելով կիսից վայր լողացնում և պարկեցնում: Ապա երեխային է լողացնում, վերան աղ ցանում, փաթաթում շորերի մէջ և երեք անգամ խաչակնքելով՝ դնում ծննդկանի աջ կողմը:

Այդ ժամանակ տան «մշտուլուղչին» վազում ամենից առաջ ծննդկանի ծնողների և ապա կնքահօր տնեցիներին, «աչքի լոյս է» ասում, աւետելով նորածնի աշխարհ գալը, որի փոխարէն և՛ մի բան նուէր է ստանում:

Մի քանի ընկալից յետոյ ազգականներն ու հարեանները տեսութեան են գալիս, իրենց հետ բերելով ձուածեղ, խաւիժ, եփած ձու և այլն: Տատմայրը ծածկում է նորածնի երեսը և չի թոյլ տալիս նորեկներին տեսնելու, մինչև որ նրանցից մի քանի կոպէկ և կամ մի «խալաթ» չի ստանում: Քալիս է նաև սանամայրը՝ բերելով իւր հետ մի սպիտակ և մի կարմիր կտոր, աղն աբաթ: Տնեցիները հիւրերին հիւրասիրում են թէյով և կամ ղայնարով.— սա պատրաստում են այսպէս՝ մի ջրով լի կաթսայի մէջ գցում են զանճաֆիլ, կինամոն և հիլ ու երկար եփ տալիս:

Մի քիչ յետոյ հրաւիրում են քահանային տունը «փարատելու», որովհետև պիղծ և քաջքերով լի են համարում: Քահանան օրհնում է մի գաւաթ ջուր, որը սրսկում են ծննդկանի սենեակում և ողողում տան ամանները: Թէև այսպիսով տունն ու ամանները սրբւում են, սակայն ծննդկանը դարձեալ մնում է անսուրբ, նրան ոչ ոք ձեռք չի տալիս, նրան կերակրում են առանձին ամաններով, որ միմիայն տատմայրը կարող է մատուցանել և յետոյ էլ լուանալ: Ինքը ծննդկանը նոյնպէս ինքն իրեն անսուրբ զգալով՝ զգուշանում է մի որ և է բանի դիպչելու: Պատահել է, որ տատմայրը ամբողջ օրը բացակայել է և խեղճ ծննդկանը քաղցած մնացել է, չհամարձակուելով հացատեղից իւր ձեռքով մի կտոր հաց վերցնելու: Սակայն այս տեղում է մինչև մըկըրտութիւնը, որ սրբում է նրան: Մինչև այս ժամանակ,

որ սովորաբար ութ օր է տևում, ծննդկանին ջրի փոխարեն գինի, պղպեղով պատրաստուած տաք կերակրներ և քաղցրեղէններ են տալիս: Տատմայրն էլ օրը մի անգամ լողացնում է նորածնին և լուանում շորերը:

\*  
\* \*

Մկրտութեան նախընթաց երեկոյին ծննդկանի տնից «սեղան» են ուղարկում կնքահօրը, որ բաղկացած է լինում զոյգ թուով գաթայից, երկու զոյգ հացից, մի եփած հաւից, մի գաւ գինուց, մի շիշ օղուց և մի զոյգ գուլբայից: Տանողը միւսնոյն ժամանակ հրաւիրում է կնքահօրը գալ միւս օրը երեխան կնքելու: Նոյն երեկոյին ուղարկում են նաև քահանային մի զոյգ հաց, մի զոյգ մօմ, մի գաւ գինի կամ մի շիշ օղի և հրաւիրում գալ երեխան մկրտելու: Միւս օրը տատմայրը վաղ առաւօտեան գալիս է և պատրաստում երեխային եկեղեցի տանելու: Գալիս է և՛ կնքահայրը, իւր հետ բերելով մի զոյգ մօմ, նարօտը և մի գունաւոր թաշկինակ: Գիւղերում սովորաբար եկեղեցումն են մկրտութեան խորհուրդը կատարում և միայն եկեղեցի չեղած դէպքում տանն են մկրտում և համարեա միշտ՝ թոնրի վրայ:

Մինչդեռ եկեղեցում կատարում են մկրտութեան խորհուրդը, տատմայրը մի փոքրիկ շիշի մէջ մեռնաջուր ածած շտապով վերադառնում է տուն և լուանում ծննդկանի ձեռները, որպէս զի նրանք սրբուած լինեն և կարողանան գրրկել մեռնուած մանկան: Լուացուած ջուրն էլ ածում է օճախը, իսկ շիշի միջի աւելացած ջուրը տալիս տնեցիներին սլահելու, որպէս զի ապագային կարողանան «հարամոտած» ամաններն ու իրերը սրբել: Նոյն միջոցին գալիս են և՛ սանամայրն ու ծննդկանի մայրը: Առաջինը բերում է «ծնընդգեւաթ» — մեղրով ու շաքարով պատրաստուած ձուածեղ — ծընընդկանի համար, իսկ երկրորդը մի ձեռք հագուստ նորածնի համար:

Վերջապէս քահանան «Լոյս 'ի լուսոյ» շարականը երգե-

լով առաջնորդում է կնքահօրը, որ երեխան բազուկների վրայ առած բերում է տուն և տալիս ծննդկանին: Սա համբուրում է կնքահօր ձեռքը և ապա առնում երեխան: Քահանան իւր «Պահպանիչը» աւարտելուց յետոյ շնորհաւորում է հետեւեալ կերպով. «Շնորհաւոր մկրտութիւն, Աստուած տըռուել է, ամուր ձեռօք պահէ, հօրով, մօրով ու բախտաւոր զաւակ լինի. այն հացիցն ուտէ, որ ոչ հատնէ, ոչ պակասէ»: Յետոյ դառնալով ներկայ եղողներին՝ ասում է. «Ես ձեզ համար մի մեռնաթաթախ երեխայ բերի, որով ամենքդ էլ ուրախ էք. դէհ, եկէք տեսնեմ դուք ինձ թնչ էք տալու, որ ես էլ ուրախանամ»: Նախ ծննդկանը, և ապա կնքահայրն ու հանդիսականները համբուրում են խաչը և խաչհամբույր ձգում: Սրանից յետոյ բոլորը նստում են ճաշելու, օրուայ որ ժամանակն էլ լինի, միւսնոյն է, օրից յետոյ արդէն՝ ցըրւում են:

Երեք օրից յետոյ տատմայրը նորից է գալիս և «երեխայի մեռոնը վեր անում»: Քթի տակը աղօթքներ շնչալով լուանում է երեխայի մեռոն քսած տեղերը մի մաքուր ամանի մէջ, յետոյ լողացնում է նրան մաքուր ջրով, առանց սապոնի, և ջուրը ածում թոնիրը: Սրանից յետոյ արդէն՝ նա իւր վարձն ստանում և գնում է: Այնուհետև տնեցիներն են մինչև քառասունքը լրանալը երեխային օրը մի անգամ լողացնում:

Մի քանի օրից էլ ծննդկանն է վեր կենում: Առաջին անգամ ոտը գետնին դնելիս նա երեք անգամ խաչակնքում է երեսը և աղօթքներ շնչում: Սակայն մինչև քառասունքը լրանալը նա տանից դուրս չի գալիս, արեգակի երես չի տեսնում, ո՛չ լողանում է և ո՛չ էլ գլուխը լուանում, այլ ամբողջ ժամանակը զբաղուած է նորածնի հոգսով, այսպէս՝ երբ տան մօտով ննջեցեալ են անցկացնում, իսկոյն ինքը կանգնում և երեխային էլ բարձրացնում է. երբ մի ուրիշ ծնընդկան և կամ մի կասկածելի անձնաւորութիւն է գալիս ծննդկանի ննջարանը, նա չի թողլ տալիս նրանց ներս մըտնելու, մինչև որ նորածնին դուրս չի հանել տալիս և ա-

պա ներս բերում: Եւ եթէ նա այդպէս չի վարւում, երեխան «կոխւում» է, այսինքն սաստիկ լղարում է և միշտ լալիս է: Այսպիսի հիւանդութիւնից բժշկելու համար նրան լողացնում են կատուի ձագի և կամ հօր գուլպաների վերայ, և եթէ սրանք չեն օգնում, տանում մի սպանուած մարդու գերեզմանի վրայ երեխայի ոտները լուանում են, յետոյ գերեզմանի քարերից մինը վերցնում և երեխայի վրայով երեք անգամ պտտեցնում են և վերջը մի ձու և մի մեխ թաղում գերեզմանի մօտ, որպէս զի հիւանդութիւնը այնտեղ մնայ:

Քառասունքը լրանալիս ծննդկանը լողանում և գլուխը լուանում է ծղօտի վրայ: Յետոյ այս ծղօտը վառում են, որպէս զի քաջքերի հետքերը կտրեն: Ապա նախ օրօրոցը, յետոյ երեխային և վերջը ծննդկանին դուրս են հանում տնից և «արևի երեսն դուրս բերում»: Երեկոյին հաւաքւում են բարեկամներն ու հարևանները և նրան ու երեխային եկեղեցի տանում, ուր քահանան կատարում է քառասունքի ծէսը: Այնուհետև արդէն ծննդկանը ազատօրէն կարող է դուրս գալ տնից:

Երեխայի եղունգները առաջին անգամ ոսկու կամ արծաթի վրայ են կտրում, որպէսզի նրա մատները միշտ ոսկու և արծաթի մէջ լինին:

Եւ երբ երեխայի առաջին ատամները երևում են, մայրը «կճեխաշ» է անում.— եփում է ցորեն, լոբի, նոխուղ (սիսեռ), բակլայ և հետը խառնում կաղին, քիչմիշ, լոբլաբու: Յետոյ նստեցնում է երեխային մի սփոոցի վրայ և առաջը մի դանակ և մի հայելի դնում: Ուրիշ փոքրիկ երեխաներ էլ կանչում նստեցնում է այդ երեխայի շուրջը և պատրաստուած կճեխաշը ածում ատամ հանող երեխայի գըլխին: Մինչդեռ երեխաները խլխլելով կճեխաշը ուտում են, մայրը դիտում է, թէ իւր ուղին նախ դանակը, թէ հայելին է վերցնում, որովհետև եթէ առաջինը վերցնի, ապագայում մի եղբայր է ունենալու, իսկ եթէ երկրորդը՝ մի քույր: